

Լուռ անձկութիւն մը կը պրկէ զիս յանկարծ.
Մութը խորին, ու բոյլ մ'անշէջ յիշատակ
Սարսուռներով կը համակեն զիս անկարծ:

1902, Յունիս

12. ՏԵՂԱՏԱՐԱՓ

Մութ մը թանձր ու հոծ պատեր է չորս դին.
Ամեհի հեկքը կը լսուի ծովուն.
Տենդեր, բիւրաւոր խորհուրդներ մթին
Կը ցնցեն յանկարծ միտքըս վրդովուն:

Օձածեւ լոյսի երիզներ ճերմակ
Կը փայլատակեն շողիւնով արագ.
Եւ որոտումներ, ահաւոր համակ,
Գոռ դըրդողումներ կը տեղան վայրագ:

Յորդ անձրեւներու տարափներ թօնուտ
Խօլ ջրվեժներով մայթը կը ծեծեն
Խառնակ շողիւն մը երկարելով բուլ՝
Իրենց մոլեգին ու վայրագ ծեծեն:

Իմ սիրտս ալ տրոփուն կը փղծկի յանկարծ,
Եւ զայն կը ծեծեն յոյգեր անհամար.
Անհաս տենչերու ճիգեր մշտարծարծ
Կը լուսաւորեն իր մռայլ կամար:

[1]903, Փետր. 12

13. ԱՆԴԱՐՁ

Գիւղին արեւը կը հատնի լռին.
Նեղ արահետէն, մօտէն բլուրին,
Կապուտ-Դարն ի վեր դագաղ կը տանին.
Յոն կը նիրհէ խոր, դժբախտ պատանին,
Ճերմակով հագուած անդա՛րձ ուղեւոր:

Ճերմակով հագուած անդարձ ուղեւոր,
Կը թողու հայր մ'ու մայր մը սըզաւոր.